նմանէ եկն 'ի Սիս։ Եւ տեսեալ իշխանքքն Հայոց, թէ՝ պատճառ լինի խռովութեան, երդմնեցուցեալ զնա, զի վնասեսցէ մանկանն, եդին զենքն 'ի դահ։ Թուսնաս փախեաւ յԱնտիոք. և զորդի Թորոսին սպանին չարաչարոյք ոմանք։ Իսկ Մլեհն խստասիրտ իշխեաց ամս Գ. և սպանաւ 'ի զօրաց իւրոց։ Եւ 'ի մեծ Վանքն՝ զոր շինեալ էր յանուն Վիմին, անդր թաղեցին զնա։

Ռուբէն՝ որդի Ստեփան պարոնի՝ եղբայր քաջին Թորոսի։ Սա բարեգործ և առատամիտ. զոր պատուեալ Հռոմայեցիք՝ կին տուին սմա յազգէն Իմպերատորի. իշխեաց ամս ԻԸ։

Լևոն՝ որդի Ստեփան պարոնի՝ եղբօր Թորոսի և Մլեհի՝ և եղբայր Ռուբենի, բերեալ 'ի Տարսոնէ՝ եդին Թագաւոր։ Սա տիրեաց ազգին Խամայելի, Բուսթէմի և Սալջիոյ, Էրկիլիոյ, Անտի-

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան